ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 Սեպտեմբերի 2019թվականի N 80

ԱՐԹՈՒՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՎԵԼ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ինքնակամ կառուցված ծենք-շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 25 դեկտեմբերի 2002 թ. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով որ Արթուր Էդուարդի Նալբանդյանի ընտանիքին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործվելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա ընտանիքի կողմից օգտագործվել է մինչև 2001 թ. մայիսի 5-ը և հիմք ընդունելով Արթուր Էդուարդի Նալբանդյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Արթուր Էդուարդի Նալբանդյանի ըստ ժառանգության իրավունքի ձեռք բերված սեփականության իրավունքը 0076-0021 կադաստրային ծածկագրով փաստացի ավել օգտագործվող 0.0051 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ,
2. Առաջարկել ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2019թ. Սեպտեմբերի 11,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (093)186023, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 81

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ՝ Գոռ Արամայիսի Մելիքյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 0078-0001/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 19 փողոց, թիվ 12 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

2019 թ. Սեպտեմբերի 20,
գ.Բամբակաշատ